

ՉՃԱՆԱԶՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՆՈՒՄՆԵՐ¹

Անդրեյ Արեշև

Ներկա պայմաններում սաստկանում են ինչպես համաշխարհային, այնպես էլ տարածաշրջանային անվտանգությանը նետված մարտահրավերներն ու սպառնալիքները: Միջազգային իրավունքն ունի նորմեր, որոնք հակամարտությունների կողմերին պարտավորեցնում են ձեռնպահ մնալ ուժի կիրառումից կամ ուժի սպառնալիքից: Ուժով կամ ուժ կիրառելու սպառնալիքն արգելելու սկզբունքը կարելի է վերագրել բոլոր պետություններին, որոնք ՄԱԿ անդամ չեն և դե-յուրե չեն ճանաչված այլ պետությունների մեծ մասի կողմից, այն պայմաններում, երբ դրանք բավականաչափ կայուն են և համապատասխանում են պետականության գիտության մեջ և քաղաքական պրակտիկայում առկա չափանիշներին: Միևնույն ժամանակ, միջազգային իրավունքի նորմերը հաճախ «պատանդ են դառնում» զանազան պետությունների քաղաքական շահերին, ինչը խանգարում է հակամարտությունների կարգավորմանը և նպաստում լարվածության մեծացմանը մի շարք տարածաշրջաններում, մասնավորապես Հարավային Կովկասում (Ղարաբաղյան հակամարտություն): Տարածաշրջանի համար առաջարկվող ԵԱՀԿ խաղաղարար պլանները անվտանգության հստակ երաշխիքներ չեն տալիս և հետագա լրամշակման կարիք ունեն:

Այս պայմաններում առաջնային նշանակություն պետք է ունենա ընդհանուր ռազմավարության մշակումը, որը կբացառեր ռազմական գործողությունների վերսկսման սպառնալիքը հետհակամարտային տարածքներում: Նման ռազմավարության բաղկացուցիչ կարող է դառնալ աստիճանաբար լեգիտիմացող պետության դե-ֆակտո ճանաչման հստակ չափանիշների մշակումը. ուժ չկիրառելու մասին լրացուցիչ համաձայնագրերի կնքում, միջազգային իրավունքի նորմերը կիրառելիս երկակի ստանդարտներից աստիճանական հրաժարում՝ կողմերի միջև վստահության ամրապնդմանն ուղղված միջոցների կիրառմամբ և իրենց՝ դե-ֆակտո պետությունների ակտիվ մասնակցությամբ:

¹ Չողովածի համառոտ տարբերակը հրապարակվել է Ռազմավարական մշակույթի հիմնադրամի էլեկտրոնային պարբերականի կայքում. <http://www.fondsk.ru/article.php?id=616>

1. Աշխարհն ավելի անվտանգ չի դարձել

Վլադիմիր Պուտինի՝ միջազգային անվտանգության հարցերին նվիրված մյունխենյան ելույթը լայն արձագանք ստացավ: Իր ելույթում Ռուսաստանի նախագահն անդրադարձավ այն հիմնախնդիրներին, որոնք ժամանակակից աշխարհակարգը բոլորովին էլ ավելի անվտանգ չեն դարձնում: Հիմնական հարցերից մեկը ուժային գործոնի անշեղ ակտիվացումն է միջազգային քաղաքականության մեջ: Տեղին է մեջբերել հետևյալ հատվածը նրա ելույթից. «Այսօր մենք տեսնում ենք ուժի գրեթե ոչնչով չզսպվող, հիպերտրոֆիկ կիրառում միջազգային գործերում, ռազմական ուժի, ուժի, որն աշխարհը ներքաշում է մեկը մյուսին հաջորդող հակամարտությունների ճահճուտը: Արդյունքում՝ ուժերը չեն ներում դրանցից ոչ մեկի համալիր լուծման համար: Անհնարին է դառնում նաև դրանց քաղաքական լուծումը:

Մենք տեսնում ենք, թե ինչպես ավելի ու ավելի շատ են անտեսվում միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները: Ավելին, առանձին նորմեր, ըստ էության՝ մի պետության, և առաջին հերթին, իհարկե, Միացյալ Նահանգների, իրավունքի գրեթե ողջ համակարգն անցել է իր ազգային սահմանները բոլոր ոլորտներում. և՛ տնտեսությունում, և՛ քաղաքականությունում, և՛ հումանիտար ոլորտում, և պարտադրվում է այլ պետություններին...

Միջազգային գործերում ավելի հաճախ են ձգտում լուծել այս կամ այն հարցը՝ ելնելով, այսպես կոչված, ընթացիկ քաղաքական կոնյունկտուրայի վրա հիմնված քաղաքական նպատակահարմարությունից:

Եվ դա, իհարկե, խիստ վտանգավոր է: Եվ տանում է նրան, որ ոչ ոք իրեն այլևս ապահով չի զգում: Ես ուզում եմ ընդգծել դա. ոչ ոք իրեն ապահով չի զգում: Որովհետև ոչ ոք չի կարող թաքնվել միջազգային իրավունքի՝ իբրև ամուր թիկունքի հետևում: Նման քաղաքականությունն, իհարկե, սպառազինությունների մրցավազքի կատալիզատոր է հանդիսանում»¹:

Դժվար է չհամաձայնել Վ.Պուտինի հետ, և ավելի մեծ թվով պետությունների ղեկավարներ պետք է կիսեն նրա մտահոգությունը ստեղծված իրավիճակի շուրջ: Ուժի կամ ուժի սպառնալիքի չկիրառման սկզբունքը խիստ կարևոր է պետությունների միջև ծագող հակամարտային իրավիճակները լուծելիս, ընդ որում՝ բոլորովին էլ ոչ միայն գլոբալ համատեքստում, երբ վերլուծում ենք ահազանացող տարաձայնություններն առաջատար համաշխարհային տերությունների միջև, ինչպիսիք են ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Չինաստանը, Եվրամիության անդամ պետությունները: Այս սկզբունքը պակաս կարևոր չէ նաև ավելի լոկալ հիմնախնդիրները լուծելիս, որոնք, սակայն, առավել մանրակրկիտ գնման պարագայում, պարզ-

¹ Ելույթի տեքստը տե՛ս Ռուսաստանի նախագահի կայքում. <http://www.kremlin.ru>.

վում է, այնքան էլ լուկալ չեն: Ուժի կամ ուժի կիրառման սպառնալիքին չդիմելու միջազգային պարտավորությունը միջազգային սովորույթի նորմ է, ինչն ամրագրված է ՄԱԿ Միջազգային դատարանի մի շարք որոշումներում¹: Սակայն միջազգային իրավունքի նորմերը հաճախ դառնում են տարբեր միջազգային խաղացողների հակասական շահերի «պատանդը»:

2. Երբ անտեսվում են իրավաքաղաքական իրողությունները

Հետխորհրդային տարածքում սառեցված հակամարտությունների (ղարաբաղյան, մերձդնեստրյան, վրաց-աբխազական և հարավօսական) կարգավորման գործընթացին ավելի մեծ թվով համաշխարհային և տարածաշրջանային պետություններ են ներգրավվում, որոնց իրական շահերը հաճախ շատ հեռու են հակամարտության գոտիներում կայուն խաղաղություն հաստատելուց: Փորձեր են արվում նաև բանակցային գործընթացին ներգրավել արդեն գոյություն ունեցող միջազգային կառույցների, որոնց գործունեությունը միջազգային վիճելի հարցերի կարգավորման մեջ 1991թ. երկրներ աշխարհի կազմալուծումից հետո զգալիորեն անարդյունավետ էր: Ղարաբաղյան հակամարտության պարագայում խոսքը վերաբերում է այնպիսի կազմակերպությունների, ինչպիսիք են ԵԱՀԿ-ն և ՄԱԿ-ը, ԵՄ-ը և ՆԱՏՕ-ն: ԵԱՀԿ Մինսկի խմբի գործունեությունը վերջին տարիներին գործնականում հայտնվել էր կաթվածահար վիճակում՝ առաջին հերթին պաշտոնական Բաքվի ապակառուցողական դիրքորոշման պատճառով: Նախագահ Իլհամ Ալիևը կանոնավորապես հանդես է գալիս ռազմաշունչ հայտարարություններով, որոնք Արևմուտքում նախընտրում են չնկատելու տալ: Մինչդեռ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իշխանությունների՝ համընդհանուր ժողովրդավարական չափորոշիչներին համապատասխան ձեռնարկած քայլերը (ինչպես, օրինակ, 2007թ. դեկտեմբերի 10-ի հանրաքվեով ընդունված սեփական Մահմանադրությունը) առաջ են բերում բազմաթիվ եվրոպական գործիչների դժգոհությունը:

Ինչպես առանձին պետությունների, այնպես էլ մի շարք միջազգային կազմակերպությունների նման երկակի հաշվապահությունը էապես թուլացնում է միջազգային իրավունքի դիրքերը, վնասում նրա վարկին՝ որոշ շահագրգիռ կողմերի շրջանում առաջացնելով այն պատրանքը, թե հեռանկարում բոլոր հիմնախնդիրները կարելի կլինի լուծել ուժով, սպառնալիքների և ռազմական բյուջեն լցնելու միջոցով: Մա չի կարող չմտահոգել իր անվտանգության մասին մտածող ցանկացած պետության, և ստիպում է

¹ Տե՛ս ՄԱԿ Միջազգային դատարանի գործը Նիկարագուայում և նրա դեմ ռազմական ու կիսառազմական բնույթի գործողությունների մասին (*Military and Paramilitary Activities in and Against Nicaragua* (Nicar. v. U.S.), 1986 I.C.J. 4, 100).

փնտրել ասիմետրիկ պատասխաններ՝ հրատապ տնտեսական խնդիրները լուծելուն անհրաժեշտ ուժերն ու միջոցները շեղելով այդ նպատակից: Վ.Պուտինի մյուսխենյան ելույթում հստակ անհանգստություն հայտնվեց ԱՄՆ ռազմականացման աճող տեմպերի առնչությամբ: ԱՄՆ պաշտպանական բյուջեն 20 անգամ գերազանցում է Ռուսաստանի նույն ցուցանիշը: Իր հերթին՝ Անդրկովկասում սպառազինությունների անվիճելի առաջատարն Ադրբեջանն է, որի ռազմական քաղաքականությունն ունի հարձակողական ռազմականացման ուղղություն: Դա դրսևորվում է, օրինակ, նրանով, որ վերջինս գերազանցապես հարձակողական սպառազինություններ է գնում: Հայկական բանակի համեմատությամբ Ադրբեջանն այժմ աչքի է ընկնում մեծ քանակությամբ մարտական ինքնաթիռների և ուղղաթիռների առկայությամբ: Ադրբեջանական բանակի մարտունակության բարձրացմանը նպաստել է նաև երկրի տարածքում գտնվող օդանավակայանների արդիականացումը ԱՄՆ հաշվին¹: Իսկ Հայաստանի և ԼՂՀ ջանքերը հիմնականում ուղղված են հակաօդային պաշտպանության արդյունավետ միջոցների ստեղծմանը [1, 2]:

Արտաքին լսարանի համար հաշվարկված հայտարարությունները կոչված են արդարացնելու երկրի խորացող ռազմականացումը: Ադրբեջանի նախագահի խոսքերով՝ *«ողջ համաշխարհային հանրությունը, ՄԱԿ-ը և այլ կազմակերպություններ ընդունում են Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և ուզում են, որ այդ հակամարտությունը լուծվի այդ սկզբունքի հաշվառմամբ: Ադրբեջանի աճող տնտեսական, քաղաքական և ռազմական հզորությունը և միջազգային կազմակերպությունների աջակցությունը ամրապնդում են մեր դիրքերը: Ես ուզում եմ, որ այդ հակամարտությունը լուծվի խաղաղ ճանապարհով: Բայց մենք պետք է պատրաստ լինենք նաև իրադարձությունների այլ զարգացման... Ուժեղ բանակ ունենալ՝ նշանակում է մեր հողը ցանկացած պահի ազատագրելու հնարավորություն...»* [3]:

Իր ծրագրային հողվածում, որն ունի «Վերինտեգրման և համագործակցության միջոցով Ադրբեջանի Հանրապետության Լեռնային Ղարաբաղի տարածաշրջանում խաղաղության հաստատման ճանապարհին» հա-

¹ Ադրբեջանի ՌՕՈւ-ն ունի *Cy-25* գրոհային ինքնաթիռների որոշ քանակություն (մոտավոր գնահատականներով՝ 20 միավոր), որոնք նախատեսված են ցամաքային ուժերին անմիջական մարտական աջակցություն ցուցաբերելու համար, *Cy-24* ուժեղացված (11-16 միավոր): 1990-ական թթ. կեսերից սեփական ՌՕՈւ հնարավորությունները բարձրացնելու նպատակով Ադրբեջանը գնեց մեծ քանակությամբ հակառակցիոն հրթիռներ *Cy-24* և *Mur-25* ինքնաթիռների վերազինման համար: Վերջին ժամանակներս տեղեկատվություն հայտնվեց Ադրբեջանում մասնագիտացված ավիավերանորոգման և ՌՕՈւ ուսումնավարժանքային կենտրոնի ստեղծման, ինչպես նաև Բաքվին Ուկրաինայից ժամանակակից մարտական ինքնաթիռներ մատակարարելու մասին ուկրաինական կողմի հետ լայնածավալ բանակցությունների վերաբերյալ [տե՛ս 2]:

վակնոտ անվանումը, Ադրբեջանի արտաքին գործերի նախարար Էլմար Մամեդյարովը, ինչպես և հարիր է դիվանագետին, խոսում է Ղարաբաղյան հակամարտության լուծման գուսպ և չափավոր քաղաքականության մասին: Եվ այնուամենայնիվ, նա նույնպես սպառնում է. «Մենք ոչ մեկին չենք զիջի մեր տարածքի և ոչ մի սանտիմետր: Ադրբեջանը պատերազմ չի ցանկանում և հավատարիմ է մնում խաղաղ կարգավորմանը: Մակայն ստատուս քվոյի (օկուպացման) հետագա կոնսոլիդացմանն ուղղված միտումնավոր գործողությունների հարկադրման պարագայում Ադրբեջանը պատրաստ է դիմել ցանկացած այլ միջոցների՝ իր տարածքային ամբողջականության օրինական վերականգնման համար» [4]:

Այս, մեղմ ասած, ոչ այնքան բարեկիրթ արտահայտություններն, այնուամենայնիվ, աշխույժ արձագանք են գտնում մի շարք միջազգային կառույցներում, որոնց կարգավիճակը՝ որպես բանակցային գործընթացի մասնակիցների, այնքան էլ պարզ չէ և որևէ մեկի կողմից էլ սահմանված չէ: Մինչև նույն ժամանակ, այդ կազմակերպությունների հանձնարարականները զարմանալիորեն համահունչ են միանգամայն պաշտոնական փաստաթղթերին, որոնք ընդունվում են, օրինակ, Կոստվոյի հարցով Կոնտակտային խմբի կամ Լեռնային Ղարաբաղի հարցով ԵԱՀԿ Մինսկի խմբի կողմից: Այսպես, 2005թ. Միջազգային ճգնաժամային խմբի կովկասյան նախագծի տնօրեն Սաբինա Ֆրեյդերը նախագուշացնում էր, որ «Ադրբեջանի կողմից տարածքային ամբողջականության վերականգնման նպատակով արվող ուժի կիրառման սպառնալիքը իրական է», իսկ «ադրբեջանական տարածքների շարունակվող օկուպացիան, սրընթաց սպառազինվող Բաքվի ֆոնին, Ադրբեջանին հարձակման լրացուցիչ առիթ է տալիս» [5, 6, cc. 84-102]: Տպավորությունն այնպիսին է, որ ներկա իրավաքաղաքական իրողություններին չհամապատասխանող այս ձևակերպումներով Ադրբեջանի իշխանությունները ոչ երկիմաստ կերպով մղվում են Ղարաբաղյան հարցում ավելի կոշտ գծի և նույնիսկ ԼՂՀ-ի դեմ ռազմական գործողության իրականացման:

Աբխազիայի և Հարավային Օսիայի պարագաներում ևս արևմտյան փորձագետները զերծ չեն մնում հրահրումներից: Օրինակ, Արևելյան լեզուների և քաղաքակրթությունների ազգային ինստիտուտի (INALCO, Փարիզ) տնօրեն Ժան Ռադվանյին, վկայակոչելով հասարակական կարծիքը, գրում է, որ «վրացիների մեծամասնությունը նույնիսկ հիշատակում էր այն մասին, որ [իրենց] տարածքները նույնպես կարելի կլինի արագ վերադարձնել»:

Վերոնշյալ ելույթներն արտահայտում են ադրբեջանական, վրացական և մոլդովական շատ քաղաքական գործիչների դիրքորոշումը 1990-ական թթ. սկզբին, մինչև ԽՍՀՄ փաստացի կազմալուծումը, իրենցից առանձնացած (ինչը տեղի էր ունեցել այդ պահին գործող խորհրդային օրենսդրությանը և

առկա իրավաքաղաքական իրողություններին համապատասխան) տարածաշրջանների նկատմամբ: ԽՍՀՄ օրենսդրությամբ՝ առանձնացող միութենական հանրապետությունները կարելի էր ինքնիշխան պետություն համարել միայն նրանում ապրող բոլոր ժողովուրդների շահերի հաշվառմամբ կամ կոնսենսուսով և այնպիսի միջոցառումներից հետո, որոնք անկախություն ստանալու ցանկություն հայտնած միութենական հանրապետությունում ապրող յուրաքանչյուր ժողովրդի համար ապահովում են պետական պատկանելության ընտրության հնարավորություն [7]:

Սակայն պնդումները, թե մայր պետություններն ազատ են, ըստ ինքնիշխանության սկզբունքի, ուժ կիրառել իրենց տարածքային ամբողջականության օրինական վերականգնման համար, առաջվա պես նույն համառությամբ արտահայտվում են որոշ մասնագետների կողմից: Երբեմն դրանց համար իրավական հիմնավորումներ են փորձում բերել: Իր «Եվրասիայի անջատողական երկրները. չկարգավորված հակամարտություններ և դե-ֆակտո պետություններ» հրապարակման մեջ ԵՄ անվտանգության հարցերի հետազոտությունների ինստիտուտի աշխատակից Դավ Լինչը մանրակրկիտ վերլուծում է անջատողական վարչակարգերի գոյության դինամիկան և նման իրավիճակներից ելքեր է որոնում: Չնայած միջազգային հանրությունը հանդես է գալիս խաղաղ կարգավորման օգտին, հետազոտողը պնդում է, որ այսպես կոչված անջատողական վարչակարգերի վերացումը *«մայր պետության կողմից ուժի կիրառման միջոցով չի կարող բացառված լինել»*: Անջատողական վարչակարգը պաշտպանված չէ նորմերով, որոնցով ղեկավարվում են օրինական պետական կազմավորումները, և օժտված չէ այն կենսունակությամբ, որն ունեն անկախ ինքնիշխան պետությունները [8, c. 19]: Որոշ փորձագետներ, ովքեր ժխտում են չճանաչված պետությունների գոյության իրավունքը, դիմում են նաև գաղափարախոսական բնույթի փաստարկների. *«Դրանց (չճանաչված պետությունների) մեծ մասի ղեկավարները սերում են Խորհրդային Միության այն ուժերից, որոնք ընդդիմանում էին ժողովրդավարության կայացմանը»*, - պնդում է, օրինակ, Ռուսաստանի Գիտությունների ակադեմիայի Եվրոպայի ինստիտուտի Միջերկրածովյան և Սևծովյան հիմնախնդիրների կենտրոնի ղեկավար Ալլա Յազկովան [9, c. 57]: Այլ հեղինակներ կարծես թե հակառակ տեսակետն են պաշտպանում և գտնում են, որ դե-ֆակտո պետությունների ժողովուրդներն ինքնուրույն ընտրության իրավունք ունեն. *«...Ինքնահռչակ» Վրաստանի և Մոլդովայի տարածքային ամբողջականության սկզբունքին հղում կատարելու հիմքեր չկան: Դա ամենահասարակ ամբոխավարությունն է»*, - գրում է Ս.Կարա-Մուրզան: Սակայն այնուհետև նա բացառություն է անում Լեռնային Ղարաբաղի համար՝ պնդելով. *«Այն միջոցը, որով նրա բնակչության հայ մեծամասնությունը սկսեց*

վերամիավորվել Հայաստանին, պարտադրված էր հակախորհրդային և հակառուսական ուժերի կողմից»: Իր հետագա դատողություններում նա դիմում է կասկածելի բնույթի քարոզչական միջոցների [10]:

Նման մոտեցումները մակերեսային են և հիմնված կոնկրետ հեղինակների բացառապես քաղաքական, եթե ոչ՝ նույնիսկ անձնական հակումների վրա: Մի կողմից՝ չճանաչված պետությունների հիմնախնդրի լուծման ուժային տարբերակը բազմանշանակ «չբացառող» փորձագետները հաշվի չեն առնում միջազգային իրավունքի շատ նորմեր, որոնց իբր նրանք հավատարիմ մնալու երդում են տվել: Նրանք թերագնահատում են անջատված տարածաշրջանների ներկա կարգավիճակը, ինչպես նաև միջազգային իրավունքի՝ տվյալ դեպքերի համար կիրառվող սկզբունքներն ու նորմերը: Նույնիսկ ֆորմալ տեսակետից նման մոտեցումը քննադատության չի դիմանում: Ինչպես միանգամայն իրավացիորեն նշում է Ս. Մարկեդոնովը, ներկայումս Մոմալին և Լիբերիան հենց այդ «անկախ ինքնիշխան պետություններն են», սակայն դրանք պետական կազմավորումներ անվանելը բավական դժվար է [11]: Այնպես, ինչպես և օկուպացված Աֆղանստանը և Իրաքը: Մյուս կողմից՝ որոշ ռուս հեղինակներ, չխորանալով այս կամ այն հակամարտության ակունքների և ծագման մեջ, իրենց վրա համարձակություն են վերցնում տալ ոչ միշտ կշռադատված գնահատականներ և կատարել, մեղմ ասած, ոչ այնքան կիրթ համեմատություններ¹:

Ինչ վերաբերում է ուժի կիրառման կամ դրա կիրառման սպառնալիքի արգելման սկզբունքին, միջազգային իրավունքի մասնագետների մեծ մասն այն կարծիքին է, որ այդ սկզբունքը կիրառելի է ինչպես ՄԱԿ-ում պաշտոնապես ճանաչված պետությունների միջև հարաբերություններում, այնպես էլ դե-ֆակտո պետությունների պարագայում: Հենց այս տեսանկյունից պետք է մեկնաբանել Բարեկամական հարաբերությունների վերաբերյալ ՄԱԿ Գլխավոր ասամբլեայի բանաձևի առաջին սկզբունքը. *«Յուրաքանչյուր պետություն պարտավոր է ձեռնպահ մնալ ուժով սպառնալուց կամ ուժ կիրառելուց այնպիսի միջազգային սահմանազատիչ գծերը խախտելու նպատակով, ինչպիսին զինված ուժերի՝ միջազգային համաձայնագրով (որի կողմ է հանդիսանում կամ էլ ինչ-որ պատճառով պարտավոր է հարգել այն) սահմանված կամ դրան համապատասխանող շփման գիծն է: Վերն ասվածում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես մի բան, որը վնաս կհասցնի ներգրավված կողմերի դիրքերին իրենց հատուկ վարչակարգերի հսկողության տակ գտնվող նման գծերի կարգավիճակի և հետևանքների առումով, կամ որպես մի բան, որը կազդի նրանց ժամանակային բնույթի վրա»:*

¹ Օրինակ, Մ. Կարա-Մուրզան իր աշխատանքում, թեև անուղղակիորեն, ԼՂՀ-ն համեմատում է ի տեր հանգեալ «Բչկերիայի» հետ:
² Սկզբունք 1, պարբ. 5., 1970թ. հոկտեմբերի 25-ի Բարեկամական հարաբերությունների մասին բանաձև (ՄԱԿ ԳԱ բանաձև 2625 (XXV)):

Ըստ Ջոշին Ֆրոուայնի՝ այս դրույթը հավասարապես վերաբերում է դե-ֆակտո վարչակարգերի ներկայիս սահմաններին [12, p. 966]: Նախկին ԽՍՀՄ անջատված տարածաշրջանների պարագայում այդ բոլոր գծերը հաստատվել են հրադադարի մասին համաձայնագրով: Այն ստորագրվել է մայր պետության և դե-ֆակտո վարչակարգի միջև, որոնք երկուսն էլ ներկայանում էին (եթե նույնիսկ ընդունենք, որ մասամբ) իբրև միջազգային օրինական անձինք, և, հետևաբար, այդ համաձայնագիրը միջազգային է, որին պետք է հետևեն երկու կողմերը: Բացի այդ, զինադադարի մասին համաձայնագրերը չունեն գործողության սահմանաժամկետ, և կողմերից ոչ մեկն իրավունք չունի չեղյալ հայտարարել կամ հրաժարվել դրանցից: Օրինակ, Լեռնային Ղարաբաղի պարագայում Ադրբեջանը, 1994թ. մայիսին հրադադարի մասին համաձայնագիրը կնքելով, դրանով իսկ ընդունեց ԼՂՀ անփոխարինելի դերն այդ փաստաթղթի ստորագրման գործում: Ավելի վաղ, 1993թ. սեպտեմբերի 10-ին ելույթ ունենալով ադրբեջանական հեռուստատեսությամբ՝ Հեյդար Ալիևը հայտարարել էր. *«Վերջին ժամանակներս Ադրբեջանի Հանրապետության համապատասխան մարմինները անմիջական կապեր են ունեցել Լեռնային Ղարաբաղի իշխող ուժերի հետ: Դրա հիման վրա ստորագրվել է հրադադարի համաձայնագիր, դա օգոստոսի 31-ին էր, որն արժանացել է նաև Հայաստանի Հանրապետության ղեկավարության հավանությանը...»* [13]:

1993թ. սեպտեմբերի 12-13-ին Մոսկվայում կայացավ Ա.Ջալիլովի և Ա.Ղուկասյանի՝ որպես Ադրբեջանի և Լեռնային Ղարաբաղի ղեկավարությունների ներկայացուցիչների, պաշտոնական հանդիպումը: Մասնակցում էր նաև ԱՀ պաշտպանության ներկայիս նախարար Ս.Աբիևը: Հանդիպման արդյունքում նույնիսկ ընդունվեց և հրապարակվեց համատեղ կոմյունիկե: Եվ այս հանդիպումը բոլորովին էլ միակը չէր: 1993թ. սեպտեմբերի 25-ին Մոսկվայում տեղի ունեցան Հ.Ալիև-Ռ.Քոչարյան փակ և Հ.Ալիև-Լ.Տեր-Պետրոսյան բաց հանդիպումները: Ընդհանուր առմամբ Ադրբեջանի և ԼՂՀ-ի միջև ստորագրվել են 10 համաձայնագրեր և պայմանավորվածություններ ռազմական գործողությունների սահմանափակման, կրակը դադարեցնելու կամ դրա ժամկետը երկարաձգելու մասին, ընդ որում՝ հենց երկու կողմերի միջև, առանց պաշտոնական Երևանի ներկայացուցիչների մասնակցության: 1994թ. սեպտեմբերի 8-9-ին Մոսկվայում տեղի ունեցան Հ.Ալիևի նոր հանդիպումները Լ.Տեր-Պետրոսյանի և Ռ.Քոչարյանի հետ [14]:

Սակայն, ինչպես ցույց տվեցին 1993-94թթ. իրադարձությունները, ադրբեջանական կողմի բոլոր քայլերը Ստեփանակերտի հետ անմիջական շփումներ հաստատելու ուղղությամբ արվում էին կամ նախընտրական նպատակներով, կամ հերթական խոշորածավալ հարձակողական գործողու-

թյուններին պատրաստվելու համար: Այդուհետև Բաքվում արվում էր հնարավոր ամեն բան՝ Ստեփանակերտին քաղաքական բանակցային գործընթացից բացառելու համար: Ստեղծված իրավիճակի անհեթեթությունն այնքան մեծ է, որ միջազգային հակամարտությունների պրակտիկայում գոյություն չունեն նման օրինակներ, երբ կողմերից մեկն ընդունում է ընդդիմադրի ռազմական սուբյեկտ լինելը, բայց միևնույն ժամանակ նրա հետ բանակցություններ չի վարում և դրանով իսկ չի ընդունում նրան որպես ինքնուրույն քաղաքական սուբյեկտ հետպատերազմյան շրջանում [15]:

3. Պետությունների ճանաչման մոտեցումների մասին

Ոչ միայն Ադրբեջանի, այլև Մոլդովայի ու Վրաստանի իրավաքաղաքական փաստարկումները ելնում են այն բանից, որ նրանց «խռովահույզ տարածքները» միջազգային իրավունքի ինքնուրույն սուբյեկտներ չեն հանդիսանում, քանի որ ընդունված չեն միջազգային հանրության կողմից: «Ոչ ոք երբեք չի ճանաչի Լեռնային Ղարաբաղը որպես ինքնուրույն պետություն... Եվ առաջին հերթին հենց առանց Ադրբեջանի կամքի դա հնարավոր չէ: Իսկ մենք երբեք դրան չենք համաձայնի», - նախազգուշացնում է Իլհամ Ալիևը [16]: Սակայն սա միանգամայն վիճելի թեզ է, իսկ գործի առումով՝ տափակ քարոզչություն: Դոկտրինն ունի ճանաչման երկու տեսություն. կոնստիտուիվ և դեկլարատիվ: Առաջինի համաձայն, որը լայնորեն տարածված էր մինչև Երկրորդ համաշխարհային պատերազմը, իսկապես, ճանաչումն է օժտված իրավաբար նշանակությամբ. ճանաչումը և միայն ճանաչումն է սահմանում (ստեղծում) միջազգային իրավունքի նոր սուբյեկտներ: Առանց առաջատար պետությունների խմբի ճանաչման նոր պետությունը չի կարող միջազգային իրավունքի սուբյեկտ համարվել [17]:

Սակայն նման մոտեցման դեպքում, նախ, լրիվ հստակ չէ, թե հատկապես ինչ քանակությամբ ճանաչում է անհրաժեշտ համապատասխան սուբյեկտին միջազգայնորեն ճանաչվածի կարգավիճակ տալու համար: Օրինակ, Թայվանը, չնայած ՄԱԿ-ում տեղ չունենալուն, ճանաչված է մոտավորապես երեսուն պետությունների կողմից և ստանում է ԱՄՆ ռազմական օգնությունն ու քաղաքական գորակցությունը: Երկրորդ՝ ինչպես ցույց է տալիս պրակտիկան, պետությունները կարող են գոյություն ունենալ և կապեր հաստատել այլ պետությունների հետ, իսկ կառավարությունները, որոնք իշխանության են եկել ոչ սահմանադրական ճանապարհով, կարող են իրենց հարմարավետ զգալ նաև առանց պաշտոնական ճանաչման: Ցայտուն օրինակ է միայն Թուրքիայի կողմից ճանաչված Հյուսիսային Կիպրոսը, որը հետևողական տնտեսական համագործակցություն է ծավալել Ադրբեջանի հետ:

Այսպիսով, կոնստուիտիվ մոտեցման դեպքում մենք անխուսափելիորեն գործ ենք ունենում երկակի չափորոշիչների հետ՝ պայմանավորված ամենազանազան քաղաքական հակումներով: Հնարավոր է՝ հենց դրա համար էլ միջազգային իրավունքի մասնագետների մեծամասնությունը պնդում է, որ ճանաչումն ունի ոչ թե կոնստուիտիվ, այլ գուտ դեկլարատիվ բնույթ: Ճանաչման դեկլարատիվ մոտեցումը ենթադրում է, որ կազմավորումը կարող է ճանաչվել միայն այն ժամանակ, երբ արդեն պետություն է ներկայացնում, ժամանակի որոշակի փուլ է անցել և համապատասխանում է պետականության որոշակի չափանիշների [18]:

Որո՞նք կարող են լինել, ուրեմն, այդ չափանիշները: Գեորգ Ելինեկի (*George Jellinek*) երեք բաղադրիչների տեսության համաձայն՝ պետականությունը պետք է համապատասխանի հետևյալ չափանիշներին. որոշակի սահմաններ ունեցող տարածքի, մշտական և որոշակի բնակչության (ժողովրդի) և սուվերեն իշխանության առկայություն: Գերմանացի իրավագետը գրում էր. *«Իրավաբանական ֆիկցիայից խուսափելու և պետության՝ ցանկացած իրավագիտությանը նախորդած բնական կեցությունը ճանաչելու համար բնական է թվում փնտրել պետության օբյեկտիվ էությունը նրա բաղկացուցիչներից, ըստ երևույթին, իրապես գոյություն ունեցող տարրերից մեկուսել: Այդ տարրերն են՝ տարածքը, ժողովուրդը, իշխողը»* [19, c. 103]:

Սա նշանակում է, որ, նախ, իշխանությունն իրականացվում է սեփական տարածքի և ժողովրդի վրա: Երկրորդ հասկանալի է, որ իր միջազգային հարաբերություններում այդ իշխանությունն ամբողջովին անկախ է երրորդ երկրներից [18, n. 4-6]: Համապատասխան չափանիշները ներկայացված են նաև մի շարք միջազգային փաստաթղթերում: Օրինակ, Մոնտեվիդեոյի 1933թ. կոնվենցիայում ամրագրված են պետության հետևյալ չորս չափանիշները. մշտական բնակչություն, որոշակի տարածք, սեփական կառավարություն, այլ պետությունների հետ հարաբերությունների մեջ մտնելու կարողություն [20]: «Ազրեսիայի սահմանում» բանաձևի հեղինակները Հոդված 1(a)-ում հեռատեսորեն գրել են, որ դրանում «պետություն» տերմինը *«կիրառվում է՝ չկանխորոշելով ճանաչման մասին հարցը կամ հարցն այն մասին, թե արդյոք պետությունը Միավորված Ազգերի Կազմակերպության անդամ է հանդիսանում»*¹: Սակայն նույնիսկ առանց այս ճշգրտման էլ ակնհայտ է հարցադրման անհեթեթությունը, երբ պետությունն այդպիսին է դառնում միայն ՄԱԿ-ում համապատասխան աթոռ զբաղեցնելուց կամ դրսից ինչ-որ մեկի կողմից ճանաչվելուց հետո:

Ինչ վերաբերում է Հարավային Օսիային, Աբխազիային, Մերձդնեստրին և Լեռնային Ղարաբաղին, ապա որոշ իրավաբան-միջազգայնագետներ

¹ Ազրեսիայի սահմանում: 1974թ. դեկտեմբերի 14-ին ՄԱԿ ԳԱ ընդունած բանաձևը. № 2214 (XXIX):

պնդում են, թե դրանք պետություններ են, քանի որ համապատասխանում են պետականության գիտության մեջ և քաղաքական պրակտիկայում առկա չափանիշներին¹: Մակայն միջազգային իրավունքի այլ մասնագետներ էլ պնդում են, որ այդ կազմավորումներում պակասում է առնվազն մեկ տարր, և այդպիսով, դրանք չեն կարող պետություններ համարվել²:

Այս վեճերը շարունակվում և, հավանաբար, անվերջ շարունակվելու են, սակայն դե-ֆակտո պետությունների հաստատուն բնույթն անտեսվել չի կարող: Սա անուղղակիորեն ընդունում են նաև այն հեղինակները, որոնց կարծիքով՝ Ռուսաստանի կողմից Մերձդնեստրի, Աբխազիայի, Հարավային Օսիայի և ԼՂՀ-ի ճանաչումն անհամեմատ ավելի մեծ վնաս, քան օգուտ կբերի. «*Բոլոր պետությունները ծնվել են արյամբ: Բայց հետո, որպեսզի չանհետանան, նրանք պետք է ստեղծարար կյանք սկսեն. ստեղծեն տնտեսություն, կառուցեն տներ, ձեռնարկություններ, կազմակերպեն առևտուրը, ստեղծեն պայմաններ բնակչության բարեկեցության բարելավման համար: Այլապես, նոր պետության գոյության ժամկետը մեծ չէ...*» [21, c. 52]: 1993թ. արտասահմանյան մամուլում կարելի էր գտնել նման նկարագրություններ. «*Ղարաբաղի հանրապետությունն այսօր ամայի գոտի է: Ադրբեջանական և հայկական գյուղերն ու փոքր քաղաքները լքված են: Տները թալանված են, այրված կամ անծածկ: Հակամարտության 4 տարիների ընթացքում զոհվել է մոտ 3 հազար մարդ, մոտ 300 հազար հոգի զրկվել է օթևանից: Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտը երկու տարի շարունակ ամեն օր ենթարկվել է գնդակոծման ընդամենը 10 կմ հեռավորության վրա գտնվող ադրբեջանական դիրքերից: Քաղաքն այսօր հաստատուն կերպով հայերի ձեռքին է, սակայն բնակչության կեսը կամ զոհվել է, կամ փախել, իսկ շինությունների կեսից ավելին կամ հիմնահատակ ավերվել է, կամ վնասվել» [22]:*

Մոտ յոթ տարի տևած հակամարտության ընթացքում հանրապետության գրեթե բոլոր քաղաքները, ինչպես նաև 119 հայկական գյուղերն ու ավանները հիմնովին կամ մասամբ ավերվել են: Որոշ գյուղեր իսպառ վերացել են երկրի երեսից, օրինակ, Մարտակերտի և Հադրութի շրջաններում: Ըստ որոշ գնահատականների, որ արվել են անմիջապես մարտական գործողություններից հետո, շարքից դուրս են եկել տասնյակ ձեռնարկություններ և արտադրամասեր, 6991 բնակելի շենք, 172 դպրոց և մանկապարտեզ, առևտրի, կենցաղի, մշակույթի 107 օբյեկտ, 107 վարչական շենք³:

¹ Հրապարակային միջազգային իրավունք և քաղաքականություն մշակող խումբ և Միջազգային իրավունքի ու քաղաքականության կենտրոն (Նոր Անգլիա): Ղարաբաղյան ճգնաժամ: Կարգավորման պլան, 2000, <http://www.ejil.org/journal/Vol9/No3/090491.pdf>, p. 23.

² Լյու Յորքի իրավաբանների ասոցիացիա. ստեղծված հակամարտության ապաստեցումը: Մոլդովայի անջատողական ճգնաժամի իրավական ասպեկտները. 2005 // <http://www.nycbar.org/pdf/report/NYCity%20BarTransnistriaReport.pdf>, p. 52.

³ «Կայանալու համար մենք պետք է կառուցենք»: Հարցազրույց Յու.Գալստյանի հետ, ԼՂ Հանրապետություն, 2 հոկտեմբերի 1995թ.:

Պատերազմի հասցրած վնասի ընդհանուր չափը կարող է համարժեք լինել, ըստ տվյալ ժամանակաշրջանի, մի քանի տասնյակ միլիարդ ռուբլու:

Ներկայումս ԼՂՀ-ն, չնայած Ադրբեջանի կազմակերպած շրջափակմանը, ունի պետական ինստիտուտների, տնտեսության, քաղաքացիական հասարակության զարգացման կայուն դինամիկա: Ստեփանակերտում երբեմնի ավերածությունների հետքեր չես գտնի, թեև շատ բնակավայրերում պատերազմի վերքերը դեռ չեն ապաքինվել: Վերջին ժամանակներս նկատվում է, որ որոշ եվրոպական պաշտոնատար անձինք վերջապես սկսում են հաշվի նստել գոյություն ունեցող իրողությունների հետ. հայտարարվել է այն մասին, որ Եվրամիության՝ Հարավային Կովկասի գծով հատուկ ներկայացուցիչ Փիթեր Սեմներին մտադիր է այցելել Ստեփանակերտ: Ըստ «Տրենդ» գործակալության հաղորդման՝ Բաքվում եղած ժամանակ նա նշել է, որ եկել է ժամանակը Լեռնային Ղարաբաղի հետ Ադրբեջանի կապերի կարգավորման համար, իսկ 2007թ. հունվարին, երկարատև ընդմիջումից հետո, ԼՂՀ ժամանեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի միջնորդ եռյակի անդամները:

ԼՂՀ՝ որպես Անդրկովկասի քաղաքական ասպարեզում գործող ինքնուրույն խաղացողի, միջազգային կապերը մեկ անգամ ևս վկայում են ճանաչման հարցերին դեկլարատիվ մոտեցման արդիականության մասին: ԵԱՀԿ Մինսկի միջնորդական խմբի խաղաղարար ծրագրերի կետերից մեկը վերաբերում է Լեռնային Ղարաբաղի անկախության հանրաքվեի անցկացմանը, որի դրական արդյունքի պարագայում ԼՂ-ն կճանաչվի միջազգային ընտանիքի լիիրավ անդամ [23]: Սակայն նման ծրագրերի էական թերություններից է անվտանգության որևէ նշանակալի երաշխիքի բացակայությունը անցումային շրջանում, որը նախատեսում է չարդարացված ձևով երկարատև ժամանակ: Այս ամենը, պաշտոնական Բաքվի անհաշտ դիրքորոշման հետ մեկտեղ, պատային իրավիճակ է ստեղծում բանակցություններում և նպաստում է տարածաշրջանում ռազմական լարվածության խորացմանը:

Ստեղծված իրավիճակից դուրս գալու քայլերից մեկը կարող էր դառնալ կողմերի միջև ռազմական գործողությունները չվերսկսելու և վիճելի հարցերը բանակցությունների, փոխզիջումների և փոխհամաձայնությունների միջոցով լուծելու պարտավորության մասին համաձայնագրի ստորագրումը: Այդ համաձայնագրով կարող էին նախատեսվել նաև միջոցներ փոխադարձ վստահության ստեղծման վերաբերյալ¹:

Ինչ վերաբերում է նախկին մայր երկրի և դե-ֆակտո վարչակարգի

¹ Դրանց մի մասի վերաբերյալ վերջերս խոսեցին Լեռնային Ղարաբաղի շուրջ Դարսումուտի կոնֆերանսի համանախագահները, տե՛ս <http://www.regnum.ru/news/775940.html>.

միջև հարաբերություններում ուժ չկիրառելու սկզբունքին, միջազգային իրավունքի նորմերն այստեղ բավական հստակ են: ՄԱԿ Կանոնադրության 2(4) հոդվածի համաձայն՝ «Միավորված Ազգերի Կազմակերպության բոլոր անդամներն իրենց միջազգային հարաբերություններում ձեռնպահ են մնում ուժով սպառնալուց կամ դրա կիրառումից ինչպես ցանկացած պետության տարածքային անձեռնմխելիության կամ քաղաքական անկախության դեմ, այնպես էլ Միավորված Ազգերի նպատակների հետ անհամատեղելի որևէ այլ ձևով»¹: Հետխորհրդային տարածքում առկա հակամարտությունների առնչությամբ տարբեր հեղինակների կողմից բազմիցս, թեև անուղղակիորեն, նշվել է «անջատված տարածքների» նախկին մայր երկրների հետ հավասար իրավասուբյեկտության մասին: «Պատմական տեսակետից Աբխազիան, Հարավային Օսիան, Մերձդնեստրը և Լեռնային Ղարաբաղը ԽՍՀՄ փլուզման նույն արդյունքն են, ինչ և Վրաստանը, Մոլդովան ու Ադրբեջանը,- ընդգծում է Քարնեգիի մոսկովյան կենտրոնի փոխտնօրեն Դ.Տրենինը:- Հարկ է հաշվի առնել, որ, օրինակ, Մերձդնեստրը Մոլդովայից առանձնացել է դեռևս մինչև վերջինիս ինքնիշխանության հռչակումը: Այլ խոսքերով՝ մերձդնեստրցիներն ապրում էին ԽՍՀՄ-ում (և Մոլդովիայի ԽՍՀ-ում՝ որպես նրա վարչական միավոր), բայց նրանց տարածքը երբեք Մոլդովայի Հանրապետության մաս չի եղել» [24]: Չի կարելի չհամաձայնել Վ.Կազիմիրովի հետ, որն ուշադրություն է հրավիրում այն բանի վրա, որ «յուրաքանչյուր հակամարտությունում խիստ կարևոր են պատճառահետևանքային կապերը, պատճառների և հետևանքների հստակ գատորոշումը, դրա նախապատմությունը, իրավաբանական առանձնահատկությունները: Կարևոր նշանակություն ունեն միությունից կամ հանրապետությունից ինքնավար կազմավորման կամ հանրապետության դուրս գալու ձևը, նախկին սուբյեկտի նկատմամբ ինքնիշխան պետության իրավահաջորդությունը, հստակ է արդյոք այն ձևակերպված» [25]: Բոլոր 4 չճանաչված պետությունները հրադադարի մասին համապատասխան համաձայնագրերի մասնակիցներ են, ստացել են դե-ֆակտո ճանաչում շատ այլ ոլորտներում (հրադադարի ռեժիմի պահպանում, հումանիտար կապեր, տնտեսական համագործակցություն² և այլն, ինչի մասին վերն արդեն խոսվել է:

¹ ՄԱԿ Կանոնադրության 2(4) հոդված, 1945թ.:

² Օրինակ, Աբխազիան երկկողմանի ամուր կապեր և համապատասխան համաձայնագրեր ունի Ռուսաստանի Դաշնության ավելի քան քառասուն սուբյեկտների հետ:

4. Ինքնապաշտպանության իրավունք

Եվ այսպես, ուժով սպառնալիքի կամ ուժի կիրառման արգելքի սկզբունքը կարելի է կիրառել բոլոր կայուն դե-ֆակտո վարչակարգերի դեպքում: Սակայն միջազգային հարաբերությունների արդի պրակտիկան ցույց է տալիս, որ քիչ է այս կամ այն սկզբունքը պարզապես հռչակելը. պետք է այնպես անել, որ այն նաև արդյունավետ գործի: Ռազմական հարձակման դեպքում ՄԱԿ Կանոնադրության 51-րդ հոդվածով և ՄԱԿ Կանոնադրության Գլուխ VII-ում սահմանված արարողակարգով նախատեսված է ինքնապաշտպանության իրավունք: Զինված հարձակման դեպքում ագրեսիայի ենթարկված պետությունն իրավունք ունի ուժ կիրառել՝ որպես օրինական ինքնապաշտպանություն (ինչպես անհատական, այնպես էլ հավաքական): «Անքակտելի իրավունք» ձևակերպումը մատնանշում է, որ ինքնապաշտպանության իրավունքը սովորական իրավունքի նորմ է և, այդպիսով, կիրառվում է բոլոր պետությունների պարագայում:

Որոշ հեղինակներ գտնում են, որ ինքնապաշտպանության իրավունքը հրամայական նորմ է, քանի որ համապատասխանում է *«վարքագծի գոյություն ունեցող կանոնների, որոնք արգելում են այն, ինչն ընդունված է որպես անթույլատրելի... պետությունների ու նրանց ժողովուրդների գոյատևման և մարդու առավել հիմնարար իրավունքների սպառնալիքի առումով»*¹: Սակայն այստեղ կարևոր է հաշվի առնել ինքնապաշտպանության իրավունքի մասին հայտարարած պետության հավակնությունների գործնական հիմնավորվածությունը:

Ցավոք, հաճախ դա չի արվում: Ինքնապաշտպանության իրավունքի ոլորտում միջազգային նորմերի ներկայիս ոչ միանշանակ մեկնաբանումը բնութագրվում է անորոշությամբ և ակնհայտ քաղաքական առաջնայնություններով: Վերջին տարիներին ինքնապաշտպանության իրավունքը լեգալացվել է ՄԱԿ Անվտանգության խորհրդի կողմից մի շարք դեպքերում, որոնք առնվազն վիճելի են թվում: Օրինակ, սեպտեմբերի 11-ի իրադարձություններից շատ չանցած ԱՄՆ-ը ՄԱԿ Անվտանգության խորհրդին ներկայացրեց ինքնապաշտպանության պլան Աֆղանստանի դեմ՝ Կանոնադրության հոդված 51-ի պահանջներին համապատասխան²: Այդ փաստաթուղթը Աֆղանստանի նկատմամբ ԱՄՆ և նրա դաշնակիցների ռազմական

¹ Տե՛ս «Պետությունների պատասխանատվությունը միջազգային հակաօրինական գործողությունների համար» հոդվածների նախագիծը, էջ 40 (Draft Articles on Responsibility of States for Internationally Wrongful Acts, pt. 2, Art. 40, para. 3, in Report of the International Law Commission on the Work of Its Fifty-third Session, U.N. GAOR, 56th Sess., Supp. No. 10, at 43, U.N. Doc.A/56/10 (2001), ինչպես նաև *James Crawford*, The International Law Commission's Articles on State Responsibility: Introduction, Text and Commentaries (2002).

² Տե՛ս ՄԱԿ-ում ԱՄՆ մշտական ներկայացուցչի 2001թ. հոկտեմբերի 7-ի նամակը ՄԱԿ Անվտանգության խորհրդի նախագահին (Oct. 7, 2001), U.N. Doc. S/2001/946 (2001).

գործողության պաշտոնական-իրավաբանական արդարացումը դարձավ: Այնինչ, մինչև օրս չի ներկայացվել համոզիչ որևէ ապացույց այն բանի, որ նյույորքյան երկվորյակ երկնաքերների վրա հարձակումը ծրագրվել էր հենց աֆղանական քարայրներում¹: Միննույն ժամանակ, Ադրբեջանի հարաձուռն ռազմականացումը անմիջական սպառնալիք է ԼՂՀ-ին և նրա ժողովրդին, ամբողջ հարավկովկասյան տարածաշրջանի կայունությանը: Այդպես էր 1991-1994թթ. ակտիվ մարտական գործողությունների ժամանակ², երբ պաշտոնական Բաքուն, անկախ իրար հաջորդող ղեկավարներից, շեշտը դնում էր բացառապես ուժի վրա: Սակայն սկսած 1992թ.՝ «*Խանքենդիի (Ստեփանակերտի) օդանավակայանի, Խոջալիի և Շուշիի ռազմավարական հենակետերի, Լաչինի ամրացված շրջանի աստիճանական կորուստը հանգեցրեց մարտական գործողությունների գոտում Ադրբեջանի կողմից իրավիճակը վերահսկելու կորստին*»³ [26]: Պաշտոնական Բաքվի զինված ուժերը հետագա փորձերը⁴ կրկին հանգեցնում էին նոր գոհերի ու ողբերգությունների: Ապագայում նման սցենարի բացառումն առաջնային խնդիր է բոլոր նրանց համար, ովքեր կողմնակից են կայուն խաղաղությանն Անդրկովկասում:

ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջարկություններն իրենց ներկայիս տեսքով, դրանց ընդունման պարագայում (ԼՂՀ պաշտպանության բանակի զորքերի միակողմանի դուրսբերում անվտանգության գոտուց և «փախստականների» արագացված վերադարձի սկիզբ⁵) վիճակն անխուսափելիորեն հետ կմղեն մինչև 1992թ. սկիզբը: Հետևաբար, դրանք ակտիվ ռազմական գործողությունների վերսկսման իրական նախադրյալներ են ստեղծում [27]: Սա, ինչպես և Բաքվի դիվանագիտության կողմից ձևակերպվող մոտեցումները, լրացուցիչ տազնապի առիթ է տալիս: «*Մենք պատրաստ ենք անցում կատարել այնպիսի կոշտ դիրքորոշումից, ինչպիսին հայերի իրավունքները չճանաչելն է, չա-*

¹ Օրինակ, մահապարտ ահաբեկիչները նույնիսկ Աֆղանստանի քաղաքացիներ չէին: Մի շարք գիտնականների կարծիքով պետության կողմից ահաբեկության աջակցության ակնհայտորեն բարձր մակարդակի բացակայությամբ կանխարգելիչ և նախազգուշական հարվածները չեն կարող միանշանակորեն արդարացվել միջազգային իրավունքի շրջանակներում: Տե՛ս *Anthony Clark Arend & Robert J. Beck, International Law and the Use of Force: Beyond the U.N. Charter Paradigm 72 - 74 (1993)*.

² Տե՛ս, օրինակ, «Начало применения современных вооружений и форм ведения боевых действий сторонами конфликта» աղյուսակը Ջ.Արապլիի *Армяно-азербайджанский конфликт: военный аспект. Баку. 1995* գրքում:

³ Հետաքրքիր է, որ ադրբեջանցի հեղինակի հոդվածում իրերն անվանվում են իրենց անուններով. «*Խոջալիի և Շուշիի ռազմավարական հենակետեր*», «*Լաչինի ամրացված շրջան*»:

⁴ Օրինակ, 1992թ. ամռանը Շահումյանի շրջանի և Մարտակերտի շրջանի մեծ մասի գրավումը, 1993-1994թթ. մարտական գործողությունները Քելբաջարի, Ադդամի և ԼՂՀ սահմանակից այլ շրջանների տարածքներից, բնակավայրերի բարբարոսական ուժեղացումները, որոնք ոչ մի կերպ չեն համապատասխանում միջազգային հումանիտար իրավունքի նորմերին:

⁵ Այս հարցում շտապողականության դեմ հանդես է գալիս նաև ԵԱՀԿ ՄԽ Ռուսաստանի համանախագահ Յուրի Մերզլյակովը, ինչի համար արժանանում է ադրբեջանական կողմի քննադատությանը: Տե՛ս <http://www.regnum.ru/news/791111.html>. «Փախստական» հասկացության իրավական համատեքստի մասին՝ Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ, տե՛ս *Манасян А. «Дартмутская лаборатория национальной дипломатии // Карабахский Экспресс. 2006. № 4(8), сс.118-119.*

փավոր դիրքորոշման, ինչպիսին նրանց իրավունքներն ապահովելն է»,- հայտարարում է Ադրբեջանի արտաքին գործերի փոխնախարար Արազ Ազիմովը [28]: Ադրբեջանցի փորձագետները համամիտ են, որ ուժի կիրառումը հակամարտության կարգավորման գործում ոչ միայն թույլատրելի է, այլև անհրաժեշտ: Ընդ որում՝ ծրագրվող ուժային գործողության վերջնական նպատակը նրանք անվանում են «հակամարտության կարգավորման ուղղությամբ հաշտության բանակցությունների արագացում» [29]: Ադրբեջանի ուժային կառույցների ներկայացուցիչները բոլորովին էլ անհրաժեշտ չեն համարում քողարկել իրենց ազդեցիվ մտադրությունները գոնե քարոզչական փաստարկներով: Ադրբեջանի ներքին գործերի հրամանատար, գեներալ-լեյտենանտ Ջաֆիր Հասանովի խոսքերով՝ ռազմական գործողություններն անխուսափելի են: Գեներալը նույնիսկ կոնկրետ պլաններ է գծում. «Մեր օպերատիվ գնդերը մարտերում կարող են իրականացնել համատեղ գործողություններ ՋՈւ այլ կառույցների հետ: Իսկ մեր մոտորացված զինվորական մասերը մարտական գործողությունների տարածքում կարող են իրականացնել տարբեր միջոցառումներ, հնարավոր է պայքար իրականացնել զինված հանցագործների դեմ, կազմակերպել պարետային ծառայություն, կարևոր օբյեկտների պահպանություն: Հատուկ նշանակության ջոկատները կարող են օգտագործվել նաև տարբեր գործողություններում»:

Այնինչ, միանգամայն ակնհայտ է, որ անբարենպաստ սցենարով իրադարձությունների զարգացման պարագայում «բանակցությունների արագացման» մասին խոսք լինել չի կարող: Այս դեպքում սկսում է գործել ռազմական ժամանակի տրամաբանությունը, երբ ազդեցիկ ենթարկված կողմի պատասխան հարվածների օբյեկտներ կարող են դառնալ հակառակորդի տարածքում գտնվող ռազմավարական օբյեկտները, ներառյալ ռազմական ենթակառուցվածքը, ինչպես նաև տրանսպորտային և այլ հաղորդակցությունները: Ռազմական գործողությունների վերսկսումն, անկասկած, կհանգեցնի տնտեսական, ռազմական, հումանիտար, էկոլոգիական աղետի ինչպես ԼՂՀ-ում, այնպես էլ Ադրբեջանում:

Ցավոք, պաշտոնական Բաքվի ռազմաշունչ նկրտումներն առայժմ համարժեք գնահատական չեն ստանում, ընդ որում՝ ոչ միայն քաղաքական, ինչի մասին վերը նշվեց, այլև իրավական: ՄԱԿ Անվտանգության խորհուրդն ավելի շուտ քաղաքական մարմին է և ոչ օրենսդրական: Հայտնի չէ, թե կձեռնարկի արդյոք այդ մարմինն անհրաժեշտ քայլեր, եթե Ադրբեջանը դիմի ուժի անօրինական կիրառման, կամ դրա կանխման փորձ կանի արդյոք այդ մասին համապատասխան տեղեկություն ունենալու պարագայում, և եթե նման փորձեր լինեն, ապա ինչպիսին կլինեն դրանք: Ժամա-

¹ http://www.analitika.az/articles.php?item_id=20070307072929820&sec_id=8

նակին կանխարգելիչ ինքնապաշտպանության փաստացի վերացումը ՄԱԿ Կանոնադրությունը կազմողները փոխարինեցին ուժի կիրառումն արգելող կոշտ նորմեր մտցնելով: Սակայն, շատ հեղինակների կարծիքով, այս թեզը բոլորովին էլ չի պարտավորեցնում պետությանը սպասել զինված հարձակմանը և կիրառել ինքնապաշտպանության իր իրավունքը միայն հարձակումն սկսվելուց հետո [30]: Եթե մենք համաձայնում ենք, որ չճանաչված երկիրն ունի միևնույն իրավունքներն ու պարտավորությունները, ինչ մնացած պետությունները, ապա այդ իրավունքների մեջ է նաև ինքնապաշտպանության իրավունքը: Միջազգային ատյանների համապատասխան որոշումը կդառնար մարտական գործողությունները չվերսկսելու ևս մեկ, թող որ ոչ բացարձակ, երաշխիք:

5. Ի՞նչ կլինի վաղը

Չճանաչված հանրապետությունների հետ կապված հարցերի վերաբերյալ Ռուսաստանի դեկլարության արտահայտած մտքերը վկայում են, որ այստեղ հաշվի են նստում առկա իրավաքաղաքական իրողությունների հետ և հավատ չեն ընծայում ամբողջովին միջազգային-իրավական համատեքստից քաղված «տարածքային ամբողջականության» վերաբերյալ բանավոր լարախաղացությանը: Այսպես, Բաքվի լրագրողների սպասումները՝ 2007թ. փետրվարի 1-ին կայացած մամուլի ասուլիսում Վլադիմիր Պուտինից «կորզել» «Ադրբեջանի տարածքային ամբողջականության» մասին հերթական հավաստիացումը, ակնհայտորեն չարդարացան: Ռուսաստանի նախագահի պատասխանը, որից հետևում էր, թե կողմերն իրենք պետք է փոխզիջում որոնեն և ոչ թե հիմնախնդիրը դնեն Մոսկվայի վրա, առաջ բերեց Բաքվի կանխատեսվող նյարդային ռեակցիան, իսկ որոշ ադրբեջանցի փորձագետներ էլ նույնիսկ սկսեցին խոսել «Ադրբեջանում ռուսական դիվանագիտության ձախողման» մասին և սպառնալ ՆԱՏՕ-ի գիրկն անցնելով [31]: Նման փաստարկները, որպես կանոն, գործի են դրվում այն ժամանակ, երբ ըստ էության առարկելու ոչինչ չկա...

Հավանաբար, զգալով իրենց իրավաքաղաքական փաստարկների թուլությունը՝ Ադրբեջանի իշխանությունները նախանձելի համառությամբ տարածում են հին քարոզչական հերյուրանքներ և հորինում նորերը: «Իոյչե Վելլե» ռադիոկայանին տված հարցազրույցում Իլհամ Ալիևը համեմատում է Կոստովոյի և Լեռնային Ղարաբաղի իրադրությունները՝ հայտարարելով, որ Ղարաբաղում «ծաղկում են կազմակերպված հանցավորության ամենատարբեր տեսակները, ներառյալ թմրաբիզնեսը և ահաբեկությունը», այն դեպքում, երբ Կոստովոն «գտնվում է միջազգային վերահսկողության ներքո» [32]: Եվ սա՛ չնայած այն բանին, որ թմրանյութերին վերաբերող սուտը

բազմիցս հերքվել է, այդ թվում և Ռուսաստանի Պետթմրավերահսկողության ղեկավար Վիկտոր Չերկեսովի կողմից [33]: Իրականության հետ որևէ կապ չունեն նաև առասպելական ահաբեկիչների մասին հեքիաթները, որոնք, իբր, խրամատավորվել են Ղարաբաղում¹: Հույսերը, թե միջազգային հանրությունը Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը կընդունի որպես օրենքից դուրս գտնվող չվերահսկվող տարածք, դատապարտված են ձախողման: Դրա գրավականը ԼՂՀ արտաքին և ներքին հետևողական քաղաքականությունն է, ինչպես և հանրապետությունում գործող բազմաթիվ հասարակական կազմակերպությունների հաշվետվություններն ու նյութերը:

Այստեղ, սակայն, պակաս կարևոր դեր չի խաղում հիմնախնդրի ընկալումը համաշխարհային հանրության և ավելի հաճախ նրա անունից հանդես եկող Միացյալ Նահանգների կողմից: ԱՄՆ Պետդեպարտամենտի ներկայացուցիչ Շոն Մըքքորմաքի վերջին հայտարարությունն այնքան էլ լավատեսության հիմքեր չի տալիս: Փետրվարի 26-ին նա հայտարարել է, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներն ընդունում է Ադրբեջանի տարածքային ամբողջականությունը և կշարունակի նպաստել Ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը [34]: Այս հայտարարությամբ միջնորդ տերությունը Մինսկյան գործընթացում փաստորեն փորձում է կանխորոշել ներկայումս ընթացող բանակցությունների ելքը, ինչը հենց միջնորդական ինստիտուտի սկզբունքների խախտում է: Ինչպես հայտնի է, այդ սկզբունքներից գլխավորը անաչառությունն է և հակամարտության բոլոր կողմերի շահերի հավասարության պահպանումը: Պաշտոնական Երևանի վրա գործադրվող արտաքին քաղաքական կենտրոնացված ճնշման պայմաններում, «Պրահայի գործընթացի» կարճացված ձևաչափում վարվող խորհրդատվությունները, որոնցում ներկայացված են Բաքուն և Երևանը, բայց ոչ Ստեփանակերտը, կանխահայտորեն որևէ դրական արդյունք տալ չեն կարող:

Ներկա պահին մենք, ըստ էության, գործ ունենք իբր բանակցային գործընթացի հետ: Մեռյալ կետից այն տեղաշարժելու համար անհրաժեշտ է հրաժարվել քաղաքական նպատակահարմարության տարբեր նկատառումներից և վերադառնալ բանակցությունների նախնական ձևաչափին, որի համաձայն՝ ԼՂՀ-ն ճանաչվել է իբրև հակամարտության կողմերից մեկը²: Վերը հիշատակված իրավաբանորեն պարտավորեցնող համաձայնագիրը հակամարտությունների կարգավորման համար ուժի կիրառումից հրաժարվելու մասին, դրա պահպանման նկատմամբ վերահսկողության

¹ Մի ժամանակ ադրբեջանական մամուլը պնդում էր, որ ԼՂՀ-ում թաքնվում է ինքը՝ Ուսամա բեն Լադենը, <http://www.regnum.ru/news/350883.html>.

² Տե՛ս ԵԱՀԿ գազաթաժողովի որոշումը Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ (Բուդապեշտ, 6 դեկտեմբերի 1994թ.): ԵԱՀԿ գործող նախագահի ռեզյումեն (Պրահա, 31 մարտի 1995թ.):

արդյունավետ մեխանիզմների հետ միասին, կարող էր դառնալ ճիշտ ուղղության ևս մեկ քայլ, արդեն գոյություն ունեցող փաստաթղթերի իրականացման լրացուցիչ երաշխիք¹: Կառուցողական դեր կարող էր խաղալ նաև ռուսաստանյան դիվանագիտությունը: Այս հարցի վերաբերյալ, վրաց-արխազական և վրաց-օսական հակամարտությունների համատեքստում, Մոսկվայի դիրքորոշումը միանգամայն հստակ և միանշանակ հնչեցրել է Սերգեյ Լավրովը. «Մեկ տարուց ավելի վրացական կողմը հրաժարվում է համաձայնագիր կնքել և՛ Հարավային Օսիայի, և՛ Աբխազիայի հետ այդ հակամարտությունները կարգավորելու համար ուժ չկիրառելու և անվտանգության երաշխիքների մասին: Վրաստանի նման դիրքորոշման որևէ բացատրություն մենք ընդունել չենք կարող: Դա պետք է արվի անվերապահորեն...»²: Սակայն այլ «սառեցված հակամարտությունների» երկարաժամկետ կարգավորումը, որոնք չեն հիշատակվել Ռուսաստանի արտգործնախարարի հարցազրույցում, նույնպես դժվար է պատկերացնել առանց նման համաձայնագրերի կնքման:

Չպետք է բացառել նաև ճանաչված և չճանաչված պետությունների միջև առանձին հարցերի շուրջ (օրինակ, տնտեսական ոլորտում) կոնկրետ համաձայնագրերի կնքման հեռանկարը: Նման երկկողմ փաստաթղթերում կձևակերպվեին իրականում արդեն ստեղծված փոխհարաբերությունները՝ ավելի քաղաքակիրթ հիմքեր տալով առկա իրավիճակին, ընդ որում՝ չճանաչված «չճանաչված» հանրապետությունների՝ նախկին մայր պետությունների հետ հարաբերությունների կարգավորումը շարունակելու հնարավորությունները [35]:

Վերջապես, առավել ակնհայտ է դառնում, որ հետխորհրդային տարածքում առաջացած հակամարտությունների նկատմամբ փոխզիջումային մոտեցումների, և որ ամենագլխավորն է, դրանց իրականացման արդյունավետ մեխանիզմների մշակումը հնարավոր կլինի միայն Վաշինգտոնում ավելի սթափ մտածող քաղաքական ուժերի իշխանության գալուց հետո:

Չճանաչված պետությունների շուրջ ստեղծված իրավիճակի զարգացման հետագա դինամիկան կարևոր ցուցանիշ է, որով կարելի կլինի հեռուն գնացող հետևություններ անել ՄԱԿ և ԵԱՀԿ՝ «սառեցված հակամարտությունների» արդարացի կարգավորմանը ոչ թե բռնության, այլ իրավաքաղաքական կարգավորման և բանակցությունների միջոցով աջակցելու ունակության մասին: Դա հնարավոր է միայն մարտական գործողությունները չվերսկսելու երաշխիքների, հակամարտության կողմերի միջև վստահու-

¹ Տե՛ս, օրինակ, 1995թ. փետրվարի 3-ի միջադեպերի կարգավորման մասին պայմանավորվածությունը, որ ստորագրել են հակամարտության երեք կողմերը // <http://vn.kazimirov.ru/doc12.htm>.

² Российская газета « 28 փետրվարի 2007թ. »:

թյան ամրապնդման, իրենց՝ դե-ֆակտո պետությունների ակտիվ մասնակցության պայմաններում: Անհրաժեշտ է ձեռնարկել դրանց ճանաչման՝ քաղաքական հակումներից ազատ հստակ չափանիշների մշակումը, և ինչքան շուտ, այնքան լավ [25]: Հակառակ պարագայում ավելի կմեծանան ռիսկն ու վտանգները, որոնց մասին խոսում էր Վ.Պուտինը Մյունխենում:

Մարտ, 2007թ.

Աղբյուրներ և գրականություն

1. *Мартиросян С.*, Российский ответ американской ПВО // <http://www.rosbalt.ru/2007/02/19/286842.html>
2. *Минасян С.*, Вооруженные силы Азербайджана: оценка военного потенциала и перспективы развития, <http://www.noravank.am/?l=2&d=19&f=706>.
3. <http://en.ara.az/news.php?id=20378>
4. *Мамедьяров Э.*, На пути к миру в нагорно-карабахском регионе Республики Азербайджан посредством реинтеграции и сотрудничества // «Пределы возможностей лидеров: элиты и общества в нагорно-карабахском мирном процессе». Программа публикаций «Аккорд». Вып. 17, 2005.
5. *Арешев А.*, Чьи интересы выражает Международная кризисная группа? // Нагорный Карабах в региональной и мировой политике, М., 2006.
6. *Фрейзер С.*, Последний шанс для установления мира? // «Пределы возможностей лидеров: элиты и общества в нагорно-карабахском мирном процессе». Программа публикаций «Аккорд». Вып. 17, 2005.
7. *Чертков А.*, Комментарий к федеральному конституционному закону «О порядке принятия в Российскую Федерацию и образования в ее составе нового субъекта российской федерации» (постатейный)// Юстицинформ, 2006.
8. *Линч Д.*, Привлекательные сепаратистские режимы Евразии, 2004.
9. Научные тетради Института Восточной Европы. Вып. 1, Непризнанные государства.
10. *Кара-Мурза С.*, Отрезанные ломти или детали для сборки будущего? <http://www.gazetanv.ru/archive/article/?id=366>
11. *Маркедонов С.*, Нагорный Карабах государство де-факто // <http://www.panorama.am/ru/society/2007/02/12/krasnodar/>
12. *Фроуайн Дж.*, Де-факто режим, EPIL I (1992 г.).
13. <http://aliyevheritage.org/cgi-bin/e-cms/vis/vis.pl?s=001&p=0736&n=000012&g=>
14. *Казимиров В.*, Нагорный Карабах должен участвовать в переговорах // <http://>

- www.regnum.ru/news/386829.html
15. *Ագադжаниян М.*, «Армянский гамбит»: гибкий подход к превентивным возможностям, <http://www.noravank.am/?l=2&d=19&f=678>
 16. <http://www.rian.ru/analytics/20061228/58042758.html>
 17. *Шлянцев Д.*, Международное право // «Юстицинформ», М., 2006.
 18. *Ирсен Кнут.* Völkerrecht. 5. Auflage. Verlag C.H. Beck, München 2004, §5 п. 23-35.
 19. *Еллинек Г.*, Общее учение о государстве, СПб, 1908.
 20. Rights and Duties of States-Convention Signed at Montevideo, December 26, 1933, <http://www.mtholyoke.edu/acad/intrel/interwar/rights.htm> [Конвенция Монтевидео по правам и обязанностям государств, 49 Стат. 3097; Серия договоров 881; 165 Серия договоров ООН 19, декабрь 26, 1933].
 21. *Тодуа З.*, Экспансия исламистов на Кавказе и в Центральной Азии, М., 2006.
 22. *Салливан С.*, Дорогостоящие победы армян, Newsweek, 3 мая 1993г.
 23. <http://www.regnum.ru/news/665413.html>
 24. *Тренин Д.*, Казус Косово // Pro et contra, № 5-6, 2006.
 25. *Казимиров В.*, «Политический атлас» конфликтов и два Хельсинкских принципа // Информационное агентство REGNUM, 2 февраля, 2007.
 26. *Касумов Р.*, Что принесла война Азербайджану. Мегполис-Экспресс, 23 февраля 1994г.
 27. *Симонян Д.*, Сдача территорий Азербайджану: стратегические последствия для Армении и Нагорного Карабаха, <http://www.regnum.ru/news/679147.html>
 28. *Азимов А.*, Азербайджан не только не согласится с расчленением своих земель, но и предотвратит его // ИА Тренд, 1 апреля 2006г., http://azeri.ru/xml/show_news.php?news_num=74354
 29. http://www.analitika.az/articles.php?item_id=20070313013427728&sec_id=8
 30. *Скотников Л.*, Право на самооборону и новые императивы безопасности // Международная жизнь, № 9, 2004.
 31. *Султанов О.*, Силуэты провала дипломатии РФ в Азербайджане // Московская правда, 8 февраля 2007г.
 32. <http://www.day.az/news/politics/71201.html>
 33. <http://www.regnum.ru/news/614855.html>
 34. <http://www.regnum.ru/news/788506.html>
 35. *Вельяминов Г.*, Признание «непризнанных» и международное право // Россия в глобальной политике, № 1, 2007.

НЕПРИЗНАННЫЕ ГОСУДАРСТВА: В ПОИСКАХ СТРАТЕГИИ РЕШЕНИЯ КОНФЛИКТОВ

Андрей Арешев

Резюме

В современных условиях усиливаются риски и угрозы как для мировой, так и для региональной безопасности. Международное право содержит нормы, обязывающие стороны конфликтов воздерживаться от использования или угрозы использования силы. Принцип запрета на угрозу силой или ее применения можно отнести ко всем государствам, не входящим в ООН и не признанным де-юре со стороны большинства других государств, при условии их достаточной стабильности и соответствия существующим в науке и политической практике критериям государственности. Вместе с тем, нормы международного права зачастую становятся заложниками политических интересов различных государств, что мешает урегулированию конфликтов и способствует усилению напряженности в ряде регионов, в частности – на Южном Кавказе (конфликт вокруг Нагорного Карабаха). Миротворческие планы ОБСЕ, предлагаемые для региона, не дают четких гарантий безопасности и нуждаются в серьезной дальнейшей доработке.

В этих условиях приоритетное значение должна иметь выработка общей стратегии, которая исключила бы угрозу возобновления военных действий в постконфликтных регионах. Составными частями такой стратегии могут стать: выработка четких критериев признания де-факто государств с движением в сторону постепенной легитимизации государств, отвечающих этим критериям; заключение дополнительных соглашений о неприменении силы; постепенный отказ от двойных стандартов в применении норм международного права, при обязательном укреплении мер доверия между сторонами конфликта и при активном участии самих де-факто государств.